ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի կողմից 01.01.2019-31.12.2019թթ. ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ

ՀՀ Շիրակի մարզի տարեկան գործունեության ծրագրի մշակում և մոնիտորինգ,ներդրումային ծրագիր-առաջարկների կազմում

- Կազմվել և համապատասխան ընթացակարգով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 26.04.2019 թվականի N 12 Լ հրամանի հավելված 7-ով հաստատվել է **ՀՀ Շիրակի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության 2019 թվականի գործունեության ծրագիրը**:
- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից նախաձեռնված տարածքային համաչափ զարգացմանն ուղղված ներդրումային հարթակում ներդրումային ծրագրեր տեղադրելու նպատակով մարզի գործարարների հետ համատեղ կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանն է տրամադրվել 26 ներդրումային ծրագրեր:
- ՀՀ Շիրակի մարզ ներդրումներ ներգրավելու նպատակով միջազգային ընկերություններին և ազգային ասոցիացիաներին ներկայացվել է ներդրումային ծրագրերի փաթեթներ (Իտալիա, Գերմանիա, Իսրայել):
- Իրականացվել է **Շիրակի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության 2018 թվականի գործունեության ծրագրի և 2019 թվականի գործունեության ծրագրի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների մոնիտորինգ**:
- ՀՀ Շիրակի մարզի համայնքներից հավաքագրվել և կազմվել է չօգտագործվող կամ ոչ նպատակային օգտագործվող պետական և համայնքային գույքի ցանկը՝ հետագայում ներդրողներին առաջարկելու նպատակով:
- Եվրոմիության հայաստանյան պատվիրակության, Մարդը կարիքի մեջ ՀԿ-ի, ՀՀ Գյուղատնտեսության նախարարության, Ամասիա համայնքապետարանի հետ համատեղ և ՀՀ կառավարության աջակցությամբ Ամասիա համայնքում հիմնադրվել է բրդի վերամշակման արտադրամաս: Բրդի վերամշակման ծրագրի իրականացումը նպաստելու է Ամասիայում աշխատատեղերի ստեղծմանը, համայնքի 10 բնակավայրերում բրդի վերամշակման ողջ արժեշղթայի զարգացմանը: Նախատեսվում է կարպետագործության զարգացում, բրդյա արտադրանքի հետ կապված ծառայություններ մատուցող ՓՄՁ-ների գործունեության խթանում:
- 2019 թվականի հուլիսի 20-ին կայացած «Իմ քայլը հանուն Շիրակի» բիզնես համաժողովի շրջանակներում կազմվել և համաժողովին ներկայացվել է SS, արդյունաբերության, զբոսաշրջության, գյուղատնտեսության և մի շարք այլ

ոլորտներին առնչվող 55 ներդրումային ծրագիր: Այս ծրագրերը տեղադրված են տարածքային համաչափ զարգացմանն ուղղված ներդրումային հարթակում: Այս ծրագրերից՝ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում լոգիստիկ և արտադրական ազատ տնտեսական գոտի ստեղծելու նախագծին ՀՀ կառավարությունը հավանություն տվեց: Ծրագրի արժեքը կազմում է 24 մլրդ դրամ: Գյումրիում ազատ տնտեսական գոտի ստեղծելու մասնավոր նախաձեռնությունը նպատակ ունի սպասարկել էլեկտրոնային առևտրի լոգիստիկ պահեստները և արտահանմանն ուղղված արտադրական գործընթացները:

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Շիրակի մարզպետարանի, Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Առևտրաարդյունաբերական պալատների համագործակցությամբ 2019 թվականի հոկտեմբերի 16-ին Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում տեղի է ունեցել «Գյումրի-Երևան 2019» բիզնես համաժողովը:

ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրեր

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեից նպատակային հատկացումներ ստանալու համար ՀՀ Շիրակի մարզի 25 համայնքների հետ համատեղ կազմված և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացված 49 ծրագրերի ամբողջական փաթեթները ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված սուբվենցիայի ծրագրերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ամբողջությամբ հաստատվել են: Երկու սուբվենցիոն ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքները նախատեսված է սկսել 2020 թվականին: Հավանության արժանացած մնացած 47 սուբվենցիայի ծրագրերով նախատեսված աշխատանքները կամ մեքենասարքավորումների ձեռքբերումը իրականացվել են այս տարում: 47 ծրագրերից 40-ն ավարտվել են և պետության մասնաբաժնի վճարումը համայնքին կատարվել է, 7 ծրագրերով նախատեսված շինարարական աշխատանքները կամ մեքենասարքավորումների մատակարարումները ավարտվել են, փաստաթղթերի հավաքագրման փուլում են, 3 ծրագրերի շինարարական աշխատանքները կամ մեքենասարքավորումների մատակարարումները դեռևս չեն ավարտվել և տեղափոխվել են 2020 թվական: 47 սուբվենցիայի ծրագրերի ամբողջական արժեքը կազմում է **1,859 մլն. դրամ**, որից ՀՀ պետական բյուջեից տրամադրված սուբվենցիայի չափը կազմում է **953.7 մլն դրամ**: Արդյունքում, սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ՀՀ Շիրակի մարզի համայնքներում ունենք՝

- 12.85 կմ երկարությամբ նորոգված, խճապատված և ասֆալտապատված ճանապարհ,
- վերակառուցված 1.65 կմ երկարությամբ խմելու ջրի ջրամատակարարման համակարգ և 0,5 կմ երկարությամբ ջրահեռացման համակարգ,
- 134 հա-ով ավելի ոռոգելի հողատարածքներ,
- Տեղադրված 1004 նոր լուսակիրներ,
- Վերակառուցված 5 մանկապարտեզ, որտեղ կարող են հաճախել շուրջ 400 երեխաներ,
- 160 կվտ ընդհանուր հզորությամբ արևային ֆոտովոլտային կայաններ,
- 1 պատմության թանգարան Գյումրի քաղաքում, 2 վերակառուցված և կահավորված մշակույթի տներ, 2 համայնքային կենտրոններ և 1 համայնքային ֆուտբոլի դաշտ,
- 1126.6 քառ.մ մակերեսով 2 բազմաբնակարան շենքի վերանորոգված տանիքներ Մարմաշեն խոշորացված համայնքում,
- 21 միավոր կումունալ տեխնիկա ու սարքավորումներ, 5 միավոր գյուղատնտեսական նշանակության տեխնիկա և 8 հատ հակակարկտային կայաններ:

Զբոսաշրջություն

- «Դեպի Հայք» հիմնադրամի հետ համագործակցելով՝ կազմակերպվել է սփյուռքահայ երիտասարդների հետ հանդիպում-քննարկում՝ արդյունաբերության, մասնավոր հատվածի և զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ:
- «ԴԻ-ՎԻ-ՎԻ ինթերնեյշնալ» կազմակերպության հետ համատեղ ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» եռամյա ծրագրի շրջանակներում ստեղծվել է «Արփի լիճ» զբոսաշրջային կլաստերը:
- Եվրոպական միության Արևելյան գործընկերության տարածաշրջանային համագործակցության կողմից և Երիտասարդ ճանապարհորդներ ծրագրի շրջանակներում տպագրվել է Շիրակի մարզի զբոսաշրջային ուղեցույցը:
- Եվրոպական միության աջակցությամբ և Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիայի նախաձեռնությամբ Աշոցք խոշորացված համայնքի Աշոցք բնակավայրում կառուցվել է դահուկային սպորտի կենտրոնը:
- Կատարվել է մարզի հյուրանոցային տնտեսությունների գույքագրում:

- Շիրակի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնի հետ համատեղ «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագրի շրջանակներում կազմվել և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին է ներկայացվել ուղևորատար երկաթուղային տրանսպորտի պայմանների բարելավման առաջարկությունների փաթեթ՝ դեպի Շիրակի մարզ ուղևորատար երկաթուղային տրանսպորտով զբոսաշրջիկների ներհոսքն ավելացնելու համար:
- Շիրակի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնի հետ համատեղ կազմվել է Շիրակի մարզում գործող հյուրանոցների, հյուրատների և հանրային սննդի օբյեկտների էլետրոնային քարտեզը, որը տեղադրված է Շիրակի մարզպետարանի պաշտոնական կայքէջում:
- Շիրակի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնի հետ համատեղ «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագրի շրջանակներում Շիրակի մարզի Պեմզաշեն համայնքում կառուցվել է «Սուիթ հոմ սթոն արթ» հյուրատունը,Գյումրի համայնում բացվել է «ԳԸվուԳ» գաստրոտունը,Մարմաշեն համայնքի Մեծ Սարիար բնակավայրում բացվել է Մեղրի համտեսի կենտրոնը, իսկ Արփի համայնքի Գառնառիճ բնակավայրում կառուցվել է «Էկոտուն» հանգստի գոտին:
- Շիրակի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնի հետ համատեղ 2019 թվականի հոկտեմբերի 14-ին անցկացրել է ենք աշխատանքային քննարկում, որը նվիրված է եղել մարզում զբոսաշրջային ուղղությունների ներուժի, հյուրանոցային և հյուրատնային բիզնեսում, ռեստորաններում և սրճարաններում սպասարկման մշակույթի, պատմամշակութային, ճմեռային, թանգարանային, էկոտուրերի ոլորտներում առկա առաջընթացին:

50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումների անցկացում, դրանց գործունեության վերլուծություն և արդյունքների ամփոփում (մոնիթորինգ)

Կատարվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների 2018 թվականի և 2019 թվականի առաջին կիսամյակի ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ, դրանց գործունեության վերլուծություն և արդյունքների ամփոփում (մոնիթորինգ) և ներկայացվել ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե:

Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների 2018թ. գործունեության արդյունքներով ՀՀ 2019թ. պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների հաշվարկման և վճարման հաշվետվական փաթեթների կազմում

- Կազմվել և ՀՀ Ֆինանսների նախարարություն է ներկայացվել պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների 2018 թվականի գործունեության արդյունքներով ՀՀ 2019 թվականին ՀՀ պետակա բյուջե վճարվելիք շահաբաժինների վերաբերյալ հաշվետվական փաթեթները:
- Կազմվել և ՀՀ Ֆինանսների նախարարություն է ներկայացվել 2021-2023թթ. միջնաժամկետ հեռանկարի կտրվածքով պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների կանխատեսվող չափերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

Առևտրի և ծառայությունների բնագավառ, համայնքների վարչական տվյալների շտեմարանների կազմում

- ՀՀ Շիրակի մարզի համայնքների հետ համատեղ կազմվել է համայնքների (բնակավայրերի) 2018 թվականի տարեկան վարչական տվյալների բազան և ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:
- Հաշվառվել, կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել 2018 թվականի և 2019 թվականի առաջին կիսամյակի համայնքների առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության օբեկտների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:
- 2019 թվականի ընթացքում իրականացվել է Արթիկ,Սպանդարյան և Սարապատ համայնքներում առևտրի և ծառայությունների բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն: